ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի բյուջեի ձևավորումը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով կարգավորող մարմնի այդ տարվա բյուջեն ձևավորվում է՝ համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի համաձայն ձևավորված հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.75 գործակցով: «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքը սահմանում է, որ հանձնաժողովի պահպանման ծախսերի տարեկան մեծության և աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունն ուղղվում է հանձնաժողովի պահպանման, տեխնիկական հագեցվածության, հանձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, սոցիալական ծրագրի իրականացման և այլ ֆոնդերին, իսկ բյուջեի 1%-ի չափով հաշվարկված գումարն ուղղվում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով:

Ծրագրի անվանումը՝ **հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում** Ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառման անվանումը՝	
1. Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում	Գումարը (հազ.դրամ)
Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝	**839899.9**
Աշխատանքի վարձատրության գծով ծախսեր	658913.8
Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, ներքին և արտասահման գործուղումների , դրամաշնորհների, նպաստների, հարկերի և պարտադիր վճարների համար նախատեսված ծախսեր	180986.1
2. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում	
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում՝	**17983.7**
Վարչական սարքավորումներ	11047.0
Ընդամենը ծախսեր	**850946.9**